

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ԹԱՆԿԱԳԻՆ ՀՈՐԵԼՅԱՐ, ՍԻՐԵԼԻ ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ,

Ձեր հորեյանն անշուշտ նշանակալի է՝ գիտամանկավարժական ու կազմակերպչական գործունեության անցած երկար ուղին արժևորելու համար, բայց այն նաև առիթ է Էղիկ Մինասյան անձնավորության հետ մտերմության, ընկերության, գործընկերություն կիսող կամ պարզապես նրա ջերմ ու բարի վերաբերմունքն ստացած բոլոր մարդկանց սրտի խոսքը, անկեղծ բարեմաղթանքը բարձրաձայնելու համար: Երևանի պետական համալսարանի ռեկտորատի, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեր նշանակալի հորեյանը:



Գալով Ձեր անցած ուղուն՝ հարկ եմ համարում նշել, որ նրա սկիզբն ու ողջ ընթացքը անցել է և ընթանում է համալսարանական բովով՝ սկսած պատմության ֆակուլտետի ուսանողից ու ԽՄԿԿ ամբիոնի դասախոսից, մինչև հարազատ ֆակուլտետի ղեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

«Ծանրակշիռ» ածականը Ձեր գիտական գործունեության կարճ, բայց դիպուկ բնութագրականն է: Ձեր հեղինակությամբ ու համահեղինակությամբ լույս են տեսել մոտ երեք տասյակ ուսումնամեթոդական աշխատանքներ, այդ թվում՝ բուհական ու դպրոցական դասագրքեր, ձեռնարկներ ու մեթոդական ուղեցույցներ, յոթ մենագրություն, 120-ից ավելի գիտական հոդվածներ, մեկ տասնյակ քարտեզներ ու ատլասներ, խմբագրել ու գրախոսել եք չորս տասնյակ գրքեր, հաջողությամբ ղեկավարել եք 12 և ընդդիմախոսել 30 ատենախոսություններ: Զառոռոդարյա Երրորդ հանրապետության անկախության ամրապնդման, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման հարցում մեծապես կարևորվում է մեր նորանկախ հայրենիքի անցած ուղու գիտական գնահատմամբ ու արժևորմամբ տարվող քաղաքականությունը տեսական ու գիտագործնական ճիշտ հիմքերի վրա դնելը: Այս տեսանկյունից մեծ արժեք ունեն նշված թեմայով Ձեր հրատարակած մենագրություններն ու հոդվածները, որոնք աչքի են ընկնում բարձրացված խնդիրների այժմեականությամբ, հարցադրումների հասցեականությամբ, գիտական կուռ կառուցվածքով ու կոնցեպտով:

Հարգարժան հորեյար, Մայր բուհը թրծել ու կոփել է Ձեզ՝ որպես հայոց պատմության տարբեր շրջանների, մասնավորապես Երրորդ Հանրապետության շրջանի

խորաթափանց մասնագետի, ինչպես և համալսարանականին բնորոշ բարձր արժեքներ դավանող անհատականության:

Միևնույն ժամանակ դուք, շնորհիվ բնատուր ձիրքերի՝ բարիության, մարդասիրության, հայրենասիրության ու բազում այլ շնորհների, երիտասարդ սերնդի շատ ներկայացուցիչների, մտավորականի ու պարզապես ճիշտ մարդու կերպարի օրինակ եք ներկայացնում: Հոգ տանել ավագ թե երիտասարդ գործընկերների մասին՝ սկսած նրանց մասնագիտական աճի խնդիրներից մինչև կենցաղ, ուշադրության ու առանձնահատուկ վերաբերմունքի, չանտեսել որևէ ուսանողի կարիք, խնդրանք ու դիմում. սա է Ձեր ոճն ու կերպը:

Դուք այն մարդկանցից եք, ում սիրտն ու հոգին երբեք չեն զգացել չարության ու նախանձի շունչը ու խորթ և օտար են մարդկային պարսավելի, բայց շատ տարածված հատկանիշները՝ բանասարկությունը, ժլատությունը, անբարյացակամությունը, միջանձնային հարաբերություններում խիստ հաշվենկատությունը, սառնությունը: Ուրախությամբ եմ փաստում, որ միշտ ջերմ հայացքով, ժպտադեմ, սիրալիր, քաղցրախոս Էդիկ Միևսայանը համալսարանական առօրյայի ասոցիատիվ պատկերներից մեկն է:

«Մովսես Խորենացի» մեծարժեք մեդալը, ՀՀ Ազգային ժողովի պատվո մեդալը, ՀՀ վարչապետի հուշամեդալը, ՀՀ Պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ», «Դրաստամատ Կանայան», «Վազգեն Սարգսյան» մեդալները, «Ֆրիտյոֆ Նանսեն» մեդալը, ԵՊՀ Ոսկե մեդալը և այլ պարգևներ անհերքելի վկայություններ են պետական, հասարակական ու գիտակրթական շրջանակների՝ Ձեր հանդեպ տածվող հարգանքի, սիրո և վստահության:

Այսօր Դուք գտնվում եք ստեղծագործական, մանկավարժական կրթակազմակերպչական, հասարակական ու ընտանեկան կյանքի եռանդուն փուլում՝ անընդհատ շարժման մեջ՝ ամենուր վայելելով սեր և հարգանք: Համալսարանականներին անկեղծ փափագն ու ցանկությունն է՝ Ձեզ միշտ տեսնել առողջ, տոկուն, երջանիկ ու հաջողակ, ուստի սրտանց բարեմաղթում եմ ամենյան բարիքով լեցուն երկար տարիների երջանիկ ու ստեղծագործ կյանք:

ԵՊՀ ռեկտոր,
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր
Ա. Բ. ՍԻՄՈՆՅԱՆ

27.05.2016